

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ՄԵԼԳՈՆԵԱՆԻ ՈՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Գերմանիոյ մեր պատուակալ աշխատակից Պ. Կարպիս Քէշիշօղլուէ ստացանք Մելգոնեան վարժարանի մասին դառն ու սրտցաւ նամակ մը: Նամակը կը հրատարակենք որոշ յապաւումներով:

*

Մօտ օրէն Բարեգործականի Կեդրոնական Վարչութիւնը Եւրոմիութեան շրջագծին մէջ գտնուող միակ հայկական կրթօճախ՝ Մելգոնեանը փակելու «պատիւ»ին պիտի արժանանայ:

Կեդրոնական վարչութեան համար հայերէն դասաւանդուած դպրոց մը «կարելոր» չէ, նոյնիսկ հայերէնն ալ այնչափ կարելոր չէ:

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) վարչութեան ատենապետը Մոնրէալի մէջ հայ երիտասարդներուն հետեւեալը կ'ըսէր. «Հարաւային Ամերիկայի փոքրիկ գաղութներէն մէկուն մէջ հայ երիտասարդները ամէն Ուրբաթ իրիկուն կը հաւաքուին եւ քէպապ կ'ուտեն, առանց բառ մը հայերէն խօսելու»: Իրա՛ւ է, քէպապ ուտելը կը բաւէ իբր հայ ներկայանալու Սփիւոքի մէջ:

Քանի մը տարի առաջ, Նիւ Եորքի մէջ այդ թուականներու Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի Տիկին Լուիզ Սիմոնն ալ կ'ըսէր. «հայերէն խօսիլը, հայոց պատմութիւնն ու աւանդները գիտնալը կարելոր չէ, կը բաւէ որ մէկը ինքզինքը հայ նկատէ»:

Ասիկա մեր ամենամեծ խնդիրներէն մէկն է: ՀԲԸՄի Կեդրոնական վարչութիւնը հիմա դպրոցը ծախելէ ետք իր ստանալիք 120 միլիոն տոլարին ետեւէն է:

Բայց պէտք է գիտնան որ այս հաստատութիւնը ազգին կը պատկանի: Բարեգործականն ալ իբր ազգանուէր հաստատութիւն, հայ ազգին կը պատկանի: Բարեգործականը հաշիւ տալ չի սիրեր: Մինչդէռ, պէտք է որ բոլոր ելեւնուտքերը Ամերիկայի մէջ երրուեալ հաշուակալներու գրասենեակի մը կողմէ քննուին եւ հրատարակուին, ինչպէս որ կ'ընէ Միացեալ Հայկական Հիմնադրամը, Լոս Անճելըսի մէջ: Հաշիւ տալու սովորութիւն չունին, որովհետեւ արդեօք Մելգոնեանը իրենց սեփականութիւնը կը նկատեն: Մելգոնեանը 28 Դեկտեմբեր 1925ին, Պոլսոյ Պատրիարքարանի կողմէ իրենց տրամադրուած է, որպէսզի կտակին համաձայն մատակարարուի: Ինչ մեղք որ Լոս Անճելըսի դատարորը Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին կողմէ բացուած դատն ալ մերժեց:

Հարցումներ կան մեր մտքին մէջ:

Դպրոցը 120, նոյնիսկ 150 միլիոն տոլարի պիտի վաճառուի: Այդ դրամը ո՞ր պիտի գործածուի արդեօք:

Ո՞վքեր պիտի մատակարարեն այդ հսկայ գումարը:

Կեդրոնական Վարչութիւնը այսպիսի մեծ գումար մը առանց ազգին հարցնելո՞ւ պիտի մատակարարէ: Հայաստանի մէջ կան բազմաթիւ դպրոցներ, որոնք քիչ գումարներով կրնան նորոգուիլ: Էջմիածնի մէջ Մելգոնեան անունով դպրոց մը պիտի բացուի: Այդպիսի դպրոց մը 3 միլիոնի խնդիր մըն է: Մնացեալ գումարները ո՞ր պիտի երթան: Ո՞վ տուած է որոշումը, թէ Հայաստան Մելգոնեանի մը պէտք ունի: Մելգոնեաններու արձաններն ու աճիւններն ալ Հայաստան պիտի փոխադրենք:

Քիչ մը ձեր շուրջբոլորը նայեցէք եւ տեսէք թէ Սփիւոքի մէջ հայութիւնը ի՞նչպէս կը

ձուլուի: Փոխանակ Մելգոնեանը համալսարանի մը վերածելու, փակել կը ջանաք: Մի՛ ընէք:

Հայաստանին օգնութեան «այո», բայց եթէ կարելի է չափը, սահմանը չանցնինք: Բարեգործականը բովանդակ հայութեան համար է եւ ո՛չ թէ միայն Հայաստանի:

Վենետիկի Մուրատ Ռափայելեանի շէնքը, որ հրաշալի Վենետիկեան պալատ մըն է, այս օրերս ծախու հանուած է: Այդ տիպար կրթօճախն ալ գոցուեցաւ քանի մը տարի առաջ: Անցեալ տարի, երբ առիթն ունեցայ այցելելու Հարաւային Հնդկաստանի Չէնայ քաղաքի Կաթողիկէ Մայր Եկեղեցիին մէջ գտնուող Մուրատ եւ Ռաֆայելներուն շիրմաքարերը, պահ մը մտածեցի. այս մեծ բարերարները այն թուականներուն խորհեր են հայերէնի դասաւանդութեան համար կրթօճախներ հիմնել: Մե՛ղք որ մեր ազգը չկրցաւ զանոնք պահել: Եւ, թէ՛ Փարիզի Սամուէլ Մուրատը եւ թէ՛ Վենետիկի Մուրատ Ռափայելեանը գոցուեցան: Հիմա Մելգոնեանը վերջինն է այդ շարքին մէջ: Մելգոնեան եղբայրները ի՛նչ խորհեր են, այսօր իրենց աճիւններն անգամ պիտի տեղափոխուի՞ն: Մելգոնեանի վաճառքէն գոյացած խոշոր գումար մըն ալ Էջմիածնի՞ն պիտի յանձնուի: Գոնէ այդ դրամով Հայաստանի մէջ տակաւին չմկրտուած հարիւր հազարներով հոգիի ճակատին միտոն թող քսեն եւ զանոնք մեր կրօնքին մօտեցնեն:

Սպասենք որ Սփիւքը իր խորունկ քունէն արթննայ եւ յառաջիկային Կեդրոնական Վարչութեան այս վաճառքէն ստանալիք միլիոններուն հաշիւը պահանջէ: Վերջապէս, պէտք է շնորհատրել Բարեգործականի այժմու Կեդրոնական վարչութեան անդամները: Ամէն վարչութիւն այսքան կարեւոր կալուածներ վաճառելու ու այսքան կարեւոր վարժարան մը գոցելու «պատի»ին չի կրնար արժանանալ: